Շաբաթական ամփոփ ակնարկ

Մակրո | Բաժնետոմսեր | Պարտատոմսեր | Կրիպտոարժույթներ | Հաշվետվություններ | Ֆյուչերսներ



Բարձրանում ենք միասին

01 Հունիս 2026

Սույն «Շաբաթական ակնարկ» վերլուծություն՛ը կազմվել է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կողմից և կարող է օգտագործվել **միայն որպես ընդհանուր բնույթի տեղեկություն:** Վերջինս արդիական է հրապարակման օրվանից շուկայի վարքագծով պայմանավորված ողջամիտ ժամկետում: «Շաբաթական ակնարկ» վերլուծական հաշվետվությունը կազմվել է ներկայումս հասանելի **հանրային տեղեկատվության** հիման վրա, որն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ը համարում է վստահելի: Սակայն, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն **չի երաշխավորում,** որ այդ տեղեկատվությունը հանդիսանում է լիարժեք և արժանահավատ, և, հետևաբար, այն **չպետք է ընկալվի որպես խորհուրդ կամ առաջարկ՝ որևէ ֆինանսական գործարք իրականացնելու դեպքում:**

«Շաբաթական ակնարկ» վերլուծության մեջ ներկայացված գործիքների ընտրությունը պայմանավորված է **շուկայի ընդհանրական մոտեցմամբ**, բարձր շրջանառության ծավալ ու հանրային լայն ընկալում ունեցող ընկերությունների բաժնետոմսերի նկատմամբ հաշվետու ժամանակահատվածում ձևավորված մեծ հետաքրքրությամբ: Հետևաբար, ընտրված ներդրումային պրոդուկտները կարող են **չհամապատասխանել բոլոր ներդրողների ցանկություններին և պահանջներին**: Ներդրումներ իրականացնող ցանկացած անձ պետք է **անհատապես ուսումնասիրի և յուրովի գնահատի** իր ներդրումային հնարավորությունները, ներդրումային պորտֆելի կառուցվածքը և դրանցից բխող ռիսկերը բոլոր կամ առանձին վերցրած ակտիվների գծով: Նախքան որևէ ներդրումային որոշում կայացնելը կամ գործարք իրականացնելը, յուրաքանչյուր ներդրող պետք է ուսումնասիրի այն տեղեկատվությունը, որը պարունակում է ռիսկերի, միջնորդավճարների և հնարավոր այլ ծախսերի նկարագրությունը: Յուրաքանչյուր ներդրող պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնի **ռիսկ/եկամուտ հարաբերակցությանը** և համոզվի, որ ներդրումը համապատասխանում է վերջինիս ներդրումային նպատակներին:

Հնարավոր կորստի կամ եկամտի ցանկացած կանխատեսում **զուտ նկարագրություն** է և չպետք է դիտվի որպես հնարավոր առավելագույն կորստի կամ շահույթի սահմանափակում: Ներդրումները **երաշխավորված կամ ապահովագրված չեն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ** կամ այլ ֆինանսական ընկերության կամ որևէ տեղական ինքնակառավարման մարմնի կամ ապահովագրական գործակալության կողմից, հետևաբար **բախվում են ներդրումային ռիսկերի հետ**, ներառյալ՝ **ողջ գումարի հնարավոր կորստի ռիսկը:** Ներդրողներն, ովքեր ներդրումներ են կատարում արտարժույթով, պետք է տեղյակ լինեն փոխարժեքի տատանումների ռիսկի մասին, որը կարող է հանգեցնել ներդրված գումարի կորստի:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ենթադրում է, որ հաճախորդը նախքան ներդրումներ իրականացնելը, **գիտակցում և տեղյակ է գործարքի հետ կապված ցանկացած հարկային և իրավական** պարտավորությունների մասին: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն **պատասխանատվություն չի կրում** այն բոլոր ուղղակի, անուղղակի հնարավոր **վնասների համար**, որոնք առաջացել են «Շաբաթական ակնարկ» վերլուծության մեջ առկա տեղեկատվության և հետևությունների մասնակի կամ ամբողջական օգտագործման հետևանքով:

Շուկաները նախորդ շաբաթ՝ ամփոփ

Նախորդ ամիս բոլոր ԱՄՆ բաժնետոմսային ինդեքսները արձանագրեցին դրական եկամտաբերություն:

Մայիսին ԱՄՆ պետական պարտատոմսերի եկամտաբերությունները աճել են:

Կիսահաղորդիչների զամբյուղը շարունակում է գրանցել նոր ռեկորդային մակարդակներ:

Մայիսին տեխնոլոգիական ոլորտը առաջատար էր:

Նախորդ շաբաթ S&P500-ը աճեց 1.45%-ով

Նախորդ շաբաթ Nasdaq-ը աճեց 2.89%-ով





Ինդեքսներ

Նախորդ շաբաթ Dow Jones-ը աճեց 0.92% -ով

Նախորդ շաբաթ Russell 2000-ը աճեց 1.86%-ով



Ինդեքսներ

ԱՄՆ–Իրան բանակցային գործընթացում արձանագրված առաջընթացի մասին նորությունները ազդեցություն ունեցան նավթի գների վրա: Մայիս ամսվա ընթացքում ԱՄՆ-ի բոլոր հիմնական բաժնետոմսային ինդեքսները գրանցեցին դրական եկամտաբերություն: Ամենաբարձր եկամտաբերությունն արձանագրեց Nasdaq-ը՝ աճելով ավելի քան 10%-ով:

Տեխնոլոգիական ոլորտը մայիսին շուկայում զբաղեցրեց առաջատար դիրք: S&P-ի տեխնոլոգիական հատվածն աճեց 19%-ով, մինչդեռ էներգետիկայի ոլորտը գրանցեց ամսվա ամենամեծ անկումը՝ նվազելով ավելի քան 5%-ով:

Կիսահաղորդիչների զամբյուղը երկրորդ ամիսն անընդմեջ արձանագրել է բարձր եկամտաբերություն: Մայիսին այն աճել է 22%-ով, այն դեպքում, երբ ապրիլին գրանցվել էր 39% աճ:

Ծրագրային ապահովման հատվածը ամսվա վերջում արձանագրել է վերջին վեց շաբաթվա լավագույն արդյունքը և մայիսն ավարտել է ավելի քան 22% եկամտաբերությամբ:





Բաժնետոմսերի շուկա | 1-ին եռամսյակի հաշվետվություններ

Costco-ի (COST) հասույթը կազմել է 63.2 միլիարդ դոլար 2026 թվականի առաջին եռամսյակում, որը տարեկան մոտ 8% աճ է, ինչը պայմանավորված է անդամակցության վճարներից ստացված եկամտի աճով, պահեստային երթևեկության շարունակական աճով և Արժեքային կողմնորոշմամբ ապրանքների նկատմամբ սպառողական պահանջարկի կայունությամբ: Մեկ բաժնետոմսի դիմաց շահույթը կազմել է 4.04 դոլար և գերազանցել է շուկայի սպասումները: Աճը պայմանավորված է միջազգային բարձր ցուցանիշներով և էլեկտրոնային առևտրի գործունեության շարունակական ընդլայնմամբ:

Dell Technologies-ը (DELL) 2026 թվականի առաջին եռամսյակում ստացել է 23.4 միլիարդ դոլարի հասույթ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 5%-ով ավելի է: Աճը պայմանավորված է ենթակառուցվածքների, սերվերների, տվյալների պահպանման համակարգերի և համակարգիչների շուկաներում պահանջարկի բարելավմամբ, որը արտացոլում է արհեստական բանականության ենթակառուցվածքներում ձեռնարկությունների կողմից շարունակական ներդրումները: Մեկ բաժնետոմսի դիմաց շահույթը կազմել է 1.37 դոլար, որը գերազանցել է սպասումները:

Բաժնետոմսերի շուկա | 1-ին եռամսյակի հաշվետվություններ

Marvell Technology-ն (MRVL) հայտնել է 1.9 միլիարդ դոլարի հասույթի մասին 2026 թվականի առաջին եռամսյակի համար, որը տարեկան մոտ 63%-ով ավելի է, ինչը ռեկորդային եռամսյակային արդյունք է: Աճը հիմնականում պայմանավորված է եղել արհեստական բանականության հետ կապված տվյալների կենտրոնների, այդ թվում՝ սիլիցիումային ծրագրերի և էլեկտրոպտիկական լուծումների նկատմամբ մեծ պահանջարկով: Մեկ բաժնետոմսի դիմաց հասույթը կազմել է 0.20 դոլար, ինչը արտացոլում է նախորդ տարվա համեմատ զգալի աճ:

Salesforce (CRM) ընկերությունը հայտնել է 9.8 միլիարդ դոլար հասույթի մասին 2026 թվականի առաջին եռամսյակում, որը 8%-ով ավելի է նախորդ տարվա նույն ժամանակահատվածից: Աճը պայմանավորված է եղել ամպային ծրագրային ապահովման շարունակական ներդրմամբ, բաժանորդագրության և աջակցության եկամուտների ընդլայնմամբ, ինչպես նաև արհեստական բանականության վրա հիմնված հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման լուծումների պահանջարկի աճով: Ընկերությունը գերազանցել է սպասումները և բարձրացրել է տարվա կանխատեսումները:

Տոկոսադրույքի սպասումներ | Պարտատոմսերի շուկա

Նախորդ ամիս նավթի գների անկումը չեզոքացվել է գնաճի աճող վախերով, ինչի արդյունքում աճել են տոկոսադրույքների բարձրացման սպասումները:

Մայիսին ԱՄՆ պետական պարտատոմսերի եկամտաբերությունները աճել են (գները՝ նվազել): Ընդհանուր առմամբ, շուկան սկսել է սպասել թույլ տնտեսական աճի և տոկոսադրույքների հնարավոր բարձրացման:

Պարտատոմսերի շուկա | Դոլարի ինդեքս | Սպոտ ոսկի

Դոլարը նախորդ ամիս ամրապնդվել է՝ արտացոլելով տոկոսադրույքների բարձրացման սպասումները:

Դոլարի չափավոր աճը արտացոլել է ոսկու ամսական չափավոր կորուստները: Ոսկին ամիսը փակեց հիմնական տեխնիկական մակարդակների միջև:

Մայիսին մետաղների շուկայում դրական եկամտաբերություն արձանագրեցին պղինձն ու արծաթը, մինչդեռ ոսկին և պլատինը գրանցեցին բացասական եկամտաբերություն:

Նավթի գինը երկրորդ շաբաթն անընդմեջ անկում է գրանցել, քանի որ ԱՄՆ–Իրան գործարքի հնարավորության մասին շարունակվող հայտարարությունները ճնշում են գները: Մայիսին WTI տեսակի նավթը արձանագրել է 17% անկում՝ 2025 թվականի ապրիլից ի վեր ամենամեծ ամսական նվազումը:



Կրիպտոարժույթներ

Բիթքոյնը ամսվա ընթացքում նվազեց մինչև 72,000 դոլարի մակարդակին՝ աջակցություն գտնելով 100օրյա սահող միջինի (DMA) մակարդակում:

Հետաքրքիր փաստեր

Արհեստական բանականությունն արագորեն ինտեգրվում է կրթական համակարգում:

Վերջին ուսումնասիրության համաձայն՝ 2024–2025 ուսումնական տարվա ընթացքում ուսուցիչների 85%-ը և աշակերտների 86%-ը օգտվել են արհեստական բանականության գործիքներից: Այն ուսուցիչները, որոնք կիրառում են այս գործիքները շաբաթական միջինում խնայում են 5.9 ժամ, ինչը համարժեք է ուսումնական տարվա ընթացքում շուրջ 6 լրիվ շաբաթվա: 2025 թվականին կրթության ոլորտում արհեստական բանականության համաշխարհային շուկայի ծավալը կազմել է 7.1 միլիարդ դոլար, իսկ մինչև 2035 թվականը կանխատեսվում է աճ մինչև 136.8 միլիարդ դոլարի: Չնայած արագ տարածմանը՝ արհեստական բանականության կիրառման և ներդրման ներուժը դեռևս հեռու է ամբողջությամբ իրացվելուց:



Հետաքրքիր փաստեր

Արհեստական բանականությունը պատրաստվում է վերաձևավորել համաշխարհային աշխատաշուկան:

Գեներատիվ արհեստական բանականությունը կարող է ազդել աշխարհում աշխատատեղերի շուրջ 24%-ի, կամ մոտ 838 միլիոն աշխատատեղի վրա: Ամենամեծ ռիսկին բախվում են բարձր եկամուտ ունեցող երկրները, որտեղ զբաղվածության մոտ 33%-ը կարող է ենթարկվել այդ ազդեցությանը: Առավել մեծ ազդեցության կենթարկվեն կրկնվող և կանխատեսելի առաջադրանքներ ներառող աշխատատեղերը, քանի որ արհեստական բանականությունը կարող է ավտոմատացնել դրանց զգալի մասը: Տարածաշրջանային կտրվածքով ամենաբարձր ազդեցությունը սպասվում է Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում, իսկ ամենացածրը՝ Աֆրիկայում: Ժամանակակից պատմության մեջ աշխատաշուկայի ամենախոշոր վերափոխումներից մեկն արդեն ընթացքի մեջ է:



Հետաքրքիր փաստեր

Չինաստանի նավթի պահանջարկի թուլացումը զսպում է համաշխարհային նավթային գների աճը:

Մայիսին Չինաստանի հում նավթի ներմուծումը կազմել է օրական մոտ 6.6 միլիոն բարել՝ 2016 թվականից ի վեր ամենացածր մակարդակը: 2026 թվականին ներմուծումը կանխատեսվում է օրական միջինը 10.9 միլիոն բարել, ինչը 2022 թվականից ի վեր ամենացածր տարեկան ցուցանիշն է: Չնայած ներմուծման նվազմանը՝ Չինաստանի նավթի պաշարները շարունակում են մնալ բարձր մակարդակում, ինչը սահմանափակում է նավթի գների հետագա աճի հնարավորությունները:



Հետաքրքիր փաստեր

ԱՄՆ-ում անձնական խնայողությունների մակարդակը ապրիլին նվազել է 0.6 տոկոսային կետով՝ հասնելով 2.6%-ի, ինչը 2022 թվականի հունիսից ի վեր ամենացածր մակարդակն է: Սա երրորդ անընդմեջ ամսական անկումն է՝ ընդհանուր 1.7 տոկոսային կետով: Սա նաև 2008 թվականի ապրիլից ի վեր երկրորդ ամենացածր ցուցանիշն է: Միևնույն ժամանակ սպառողական ծախսերը ապրիլին աճել են 5.7%-ով՝ տարեկան կտրվածքով, գերազանցելով անձնական եկամտի 2.5% աճը, ինչը 2022 թվականից ի վեր ամենամեծ տարբերությունն է: Սա նաև 12-րդ անընդմեջ ամիսն է, երբ ծախսերի աճը գերազանցում է եկամուտների աճին՝ վկայելով, որ տնային տնտեսությունները ավելի շատ են օգտագործում խնայողությունները ծախսերը ծածկելու համար: Ընդհանուր առմամբ, գնաճային ճնշումները ստիպում են ամերիկյան տնային տնտեսություններին կրճատել խնայողությունները՝ կենսապահովման աճող ծախսերը համընթաց պահելու համար:



As of May 2026
Source: DoubleLine, BEA, Macrobond. Red shaded areas indicate recessionary periods.

DoubleLine

Հետաքրքիր փաստեր

ԱՄՆ պարտքային ճգնաժամը զգալիորեն կվատանա: Ըստ CBO-ի (Congressional Budget Office)՝ գնահատվում է, որ նպաստները, տոկոսները և այլ պարտադիր ծախսերը 2031 թվականին կգերազանցեն դաշնային հարկային եկամուտները: Կանխատեսվում է, որ այս ծախսերը մինչև 2040 թվականը կաճեն մինչև ՀՆԱ-ի մոտ 20%-ը: Դա կլինի ռեկորդային բարձր մակարդակ, եթե չհաշվենք 2020 և 2021 թվականների համավարակի շրջանը: Միայն զուտ տոկոսները կհասնեն ՀՆԱ-ի 5%-ին, ինչը բոլոր ժամանակների ամենաբարձր ցուցանիշն է: Միևնույն ժամանակ, հարկային եկամուտները, կանխատեսվում է, որ կաճեն՝ հասնելով ՀՆԱ-ի 18%-ին, ինչը ամենաբարձրն է 2020 թվականից ի վեր:



Հետաքրքիր փաստեր

Փաուելի ղեկավարության ընթացքում Դաշնային պահուստային համակարգը (ԴՊՀ) զգալիորեն ընդլայնել է դրամական զանգվածը՝ այն ավելացնելով մոտ 9 տրիլիոն դոլարով: Վերջին վեց տարիների ընթացքում գնաճը միջինում կազմել է տարեկան շուրջ 4%: Փաուելի մեկնաբանությամբ՝ գնաճի հիմնական պատճառը եղել են «մատակարարման ցնցումները», որոնց վրա ԴՊՀ-ն ուղղակի վերահսկողություն չունի: Սակայն քննադատների կարծիքով՝ գնաճի ճնշումները հիմնականում պայմանավորված են կառավարության բարձր ծախսերով և դրամական զանգվածի չափազանց ընդլայնմամբ:



Հետաքրքիր փաստեր

ԱՄՆ-ի տնտեսական աճը դանդաղում է:



Հետաքրքիր փաստեր

ԱՄՆ տեխնոլոգիական բաժնետոմսերը շարունակում են գրանցել պատմական աճ:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը այժմ կազմում է S&P 500-ի շուկայական կապիտալիզացիայի շուրջ 37%-ը, ինչը բոլոր ժամանակների ամենաբարձր ցուցանիշն է և գրեթե կրկնակի ավելի է 2020 թվականի շուկայի նվազագույն մակարդակից: Համեմատության համար՝ Dot-Com Bubble-ի գագաթնակետին այդ ցուցանիշը կազմել է մոտ 35%: Արդյունքում տեխնոլոգիական ոլորտի շուկայական կապիտալիզացիան հասել է ռեկորդային 29 տրիլիոն դոլարի: Միևնույն ժամանակ, այն ձևավորում է ԱՄՆ տնտեսության զգալի մասը՝ գերիշխելով շուկայում, որտեղ մնացած 10 ոլորտները միասին կազմում են ընդհանուր կապիտալիզացիայի մոտ 49 տրիլիոն դոլարը՝ ընդհանուր 78 տրիլիոն դոլարից: Այս համակենտրոնացումը ընդգծում է, որ ԱՄՆ ֆոնդային շուկան երբեք այսքան ուժեղ կախված չի եղել մեկ ոլորտից:

Կորպորատիվ հաշվետվությունների ցանկ

Այս շաբաթ 73 ընկերություններ հրապարակելու են իրենց ֆինանսական հաշվետվությունները 2026 թվականի առաջին եռամսյակի համար: Շուկայի մասնակիցների կողմից առավել սպասված են Broadcom (AVGO), Palo Alto Networks (PANW), CrowdStrike Holdings (CRWD), Dollar General (DG), Ulta Beauty (ULTA) և բազմաթիվ այլ ընկերությունների հաշվետվությունները:

No.	Ticker	Company	Sector	Industry	Country	Market Cap	P/E	Price
1	AVGO	Broadcom Inc	Technology	Semiconductors	USA	2115.31B	87.15	446.77
2	PANW	Palo Alto Networks Inc	Technology	Software - Infrastructure	USA	229.86B	155.87	281.69
3	CRWD	Crowdstrike Holdings Inc	Technology	Software - Infrastructure	USA	186.07B	-	731.00
4	MDT	Medtronic Plc	Healthcare	Medical Devices	Ireland	94.76B	20.61	73.81
5	CIEN	CIENA Corp	Technology	Communication Equipment	USA	82.04B	368.47	580.23
6	HPE	Hewlett Packard Enterprise Co	Technology	Communication Equipment	USA	57.11B	-	43.04
7	CRDO	Credo Technology Group Holding Ltd	Technology	Semiconductors	Cayman Islands	43.54B	130.90	236.03
8	VEEV	Veeva Systems Inc	Healthcare	Health Information Services	USA	28.45B	32.19	174.34
9	DG	Dollar General Corp	Consumer Defensive	Discount Stores	USA	24.36B	16.15	110.61
10	ULTA	Ulta Beauty Inc	Consumer Cyclical	Specialty Retail	USA	22.17B	19.85	508.85
11	IOT	Samsara Inc	Technology	Software - Infrastructure	USA	20.39B	-	34.99
12	PL	Planet Labs PBC	Industrials	Aerospace & Defense	USA	17.70B	-	51.14
13	RBRK	Rubrik Inc	Technology	Software - Infrastructure	USA	16.18B	-	78.63
14	LULU	Lululemon Athletica Inc	Consumer Cyclical	Apparel Retail	Canada	15.68B	9.86	131.18
15	GWRE	Guidewire Software Inc	Technology	Software - Application	USA	12.92B	69.46	152.67
16	FIVE	Five Below Inc	Consumer Cyclical	Specialty Retail	USA	12.57B	35.20	227.36
17	BF-B	Brown-Forman Corp	Consumer Defensive	Beverages - Wineries & Distilleries	USA	11.97B	14.96	25.72
18	BF-A	Brown-Forman Corp	Consumer Defensive	Beverages - Wineries & Distilleries	USA	11.97B	15.55	26.73
19	COO	Cooper Companies Inc	Healthcare	Medical Instruments & Supplies	USA	11.94B	30.29	61.21
20	XE	X-Energy Inc	Industrials	Specialty Industrial Machinery	USA	10.89B	-	26.91

Այս շաբաթվա ԱՄՆ տնտեսական օրացույցը

TIME (ET)	REPORT	PERIOD	ACTUAL	MEDIAN FORECAST	PREVIOUS
MONDAY, JUNE 1					
9:45 am	S&P final U.S. manufacturing PMI	May			55.3
10:00 am	ISM manufacturing	May		53.2%	52.7%
10:00 am	Construction spending	April		0.3%	0.6%
11:50 pm	Minneapolis Fed President Neel Kashkari speech in South Korea				
TBA	Auto sales	May		--	15.9 million
TUESDAY, JUNE 2					
8:55 am	Cleveland Fed President Beth Hammack speech				
10:00 am	Job openings	April		6.9 million	6.9 million
WEDNESDAY, JUNE 3					
8:15 am	ADP employment	May		120,000	109,000
9:00 am	Federal Reserve governor Michael Barr speech				
9:45 am	S&P final U.S. services PMI	May			50.9
10:00 am	Factory orders	April		4.3%	1.5%
10:00 am	ISM services	May		53.9%	53.6%
2:00 pm	Fed Beige Book				
THURSDAY, JUNE 4					
8:30 am	Initial jobless claims	May 30		215,000	215,000
8:30 am	U.S. productivity	Q1		0.6%	0.8%
8:30 am	Richmond Fed President Tom Barkin speech				
FRIDAY, JUNE 5					
8:30 am	U.S. employment report	May		90,000	115,000
8:30 am	U.S. unemployment rate	May		4.3%	4.3%
8:30 am	U.S. hourly wages	May		0.3%	0.2%
8:30 am	Hourly wages year over year			3.4%	3.6%
3:00 pm	Consumer credit	April		$18.0B	$24.8B
SATURDAY, JUNE 6					
12:00 pm	Federal Reserve governor Michael Barr speech				

AraratBank

060 408 005, 060 408 002, 010 592 301
87 Pavstos Buzand St, Yerevan, 0002
brokerage@araratbank@am